ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ **ԱԶԴԱԿ**-Ի

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀՈԴԻՆ ՈՒ ՀԱՅՐԸ 3

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

Ազատ մարդ, համերաշխ հասարակութիւն, պատասխանատու պետութիւն

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը

որպէս ազգային, ժողովրդավար, ընկերվարական եւ յեղափոխական կուսակցութիւն, մշտապէս պայքարել է հայ մարդու եւ հայութեան քաղաքական, տնտեսական, ընկերային-մշակութային շահերի համար:

ՀՅ Դաշնակցութիւնը համահայկական ուժ է, ունի ապագայի իր տեսլականը, ունի յստակ՝ մեր ժողովրդի էութիւնից բխող արժէքային համակարգ, ունի իր նպատակներն իրականացնելու կազմակերպական կառոյց ու վերահսկման մեքանիզմ:

ՀՅ Դաշնակցութեան համար բարձրագոյն արժէք են մարդը, նրա արժանապատուութիւնն ու իրաւունքները: Կարեւոր է, որ Հայաստանի քաղաքացին հաւատայ իր պետութեանը, իր եւ իր ընտանիքի վաղուայ օրւան, մասնակից դառնայ այդ ապագայի կերտմանը: Հարկ է թռիչքաձեւ, կայուն զարգացման նախադրեալներ ստեղծել, թարմ շունչ հաղորդել հասարակական կեանքի բոլոր ոլորտներին:

ՀՅԴ նախընտրական ծրագիրը կառուցուած է բարոյականութեան եւ արդարութեան չափանիշներով: Այն ուղղուած է ապագային, իսկ մեր հայեացքը՝ երիտասարդներին:

Մեր նպատակն է կառուցել ազատ քաղաքացիների հզօր եւ արդար երկիր:

Ապրիլին սկսուած ժողովրդական շարժումը փակեց անցեալի էջը: Այսօր մենք կանգնած ենք վաղուայ հայրենիքը կերտելու հրամայականի առաջ: Այս ընտրութիւններով է որոշուելու, թէ ո՛ր ուղղութեամբ է զարգանալու Հայաստանը: Արդեօք մենք կ՚ունենանք ազատ քաղաքացի, համերաշխ հասարակութիւն եւ անկախ պետութիւն, թէ Հայաստանը կը գահավիժի անորոշութեան ու անկառավարելիութեան յորձանուտը, խոցելի կը դառնայ արտաքին հարուածների ու տարաբնոյթ ապազգային ուժերի սադրանքների նկատմամբ, կը շարունակուեն հասարակութեան բեւեռացումն ու արտագաղթը: Սկսածն անշրջելի դարձնելու, խորացնելու եւ աւարտին հասցնելու առաքելութիւն ունի Դաշնակցութիւնը:

Դաշնակցութիւնը հանդէս է գալիս ազգային արժէքների պահպանման, առանց զիջումների զարգացման եւ ընկերային արդարութեան դիրքերից:

Տնտեսական քաղաքականութեան մեր առաջնահերթութիւններն են.

- առաջանցիկ տնտեսական աճը,
- ընկերային ներառականութիւն եւ արդարութիւնը,
- կայուն զարգացումը:

Տնտեսութիւնը պէտք է զարգանայ ոչ թէ շուկայական տարերային մօտեցմամբ, այլ՝ պետական անհրաժեշտ կարգաւորման զուգորդմամբ ձգտի տնտեսութեան առաւելագոյն ներուժի իրացմանը: Պետութիւնը չպէտք է հանդէս գայ դիտորդի կարգավիճակում՝ տնտեսութեան կարգաւորումը թողնելով «շուկայի անտեսանելի ձեռքին», այլ պէտք է արդիւնաւէտ միջամտութեամբ վերացնի շուկայական ձախողումները, մենաշնորհների առաջացումը, գերիշխող դիրքի չարաշահումը, իսկ անհրաժեշտութեան դէպքում՝ տնտեսութեան զարգացման լոքոմոթիվի դերը ստանձնի:

Դաշնակցութեան համար ընկերային արդարութիւնը հիմնական օրակարգ է: Ազգային արժէքը ստեղծւում է ամբողջ հասարակութեան ջանքերով: Բայց արդեօ՞ք այդ արժէքն արդար է բաշխւում արժէքը ստեղծողների միջեւ: Ո՛չ: Ընկերային բեւեռացումը Հայաստանում հասել է ահռելի մակարդակի եւ շարունակում է խորանալ: Հայաստանի անկախացումից ի վեր իրականացուող տնտեսական ու ընկերային քաղաքականութիւնը բերել է հարուստների էլ աւելի հարստացմանը եւ աղքատների էլ աւելի աղքատացմանը:

Դաշնակցութիւնը վստահ է, որ պետութեան քաղաքականութիւնը պէտք է միտուած լինի բնական **ռեսուրսների** գերշահագործումը բացառելուն, շրջակայ միջավայրի, այդ թւում՝ մարդու կեանքի ու առողջութեան վրայ բացասական ազդեցութիւնը նուազեցնելուն, բնական **ռեսուրսների** համալիր կառավարմանը եւ դրանցից ստացուող եկամուտների արդար բաշխմանը հասարակութեան բոլոր անդամների միջեւ:

Սակայն, կայուն զարգացումը միայն բնապահպանական գործօն չէ: Այն պահանջում է, որ պետութեան քաղաքականութիւնն ուղղուած լինի նաեւ գալիք սերունդների բարեկեցութեան ապահովմանը, ներառեալ՝ կրթութիւնն ու առողջապահութիւնը:

Հայաստանի քաղաքացին Դաշնակցութեանը տուած իր քուէով երաշխաւորելու է լայնածաւալ այս բարեփոխումներն ու երկրի առաջընթացը:

Միայն այս ճանապարհով է հնարաւոր վերացնել ժողովրդի՝ տարիներով կուտակուած արդարացի դժգոհութեան պատճառները, անշրջելի դարձնել երկրի կայուն եւ առաջանցիկ զարգացումը:

Ահա թէ ինչո՛ւ կարեւոր է, որ խորհրդարանում լինեն իրական քաղաքական ուժեր, ազգային-պետական եւ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու շահերով առաջնորդուող քաղաքական գործիչներ:

Սիրելի՛ հայրենակից,

Առաջիկայ ընտրութիւններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերը քո աչքի առաջ են:

Համեմատի՛ր եւ կը տեսնես՝ Դաշնակցութիւնը տարբերւում է միւսներից. մենք մի անձի կուսակցութիւն չենք, ունենք մեծ փորձառութիւն, ունենք գաղափարական եւ ծրագրային սկզբունքներ, որոնց երբեք չենք դաւաճանել, հետեւողական ենք, չենք եղել ու չենք կարող ամբոխավար լինել՝ այսօր ասել մի բան, վաղը՝ հակառակը: Մենք չենք փոխուել. ե՛ւ ընդդիմութիւն, ե՛ւ իշխանութիւն եղած ժամանակ Դաշնակցութիւնը առաջադրել է միեւնոյն խնդիրները եւ լուծումներ գտել:

Մենք սկսել ենք Արցախով: Միասին յաղթել ենք Արցախում: Կարողացել ենք ազգային հուն վերադարձնել երկրի քաղաքական ուղեգիծը: Կարողացել ենք կառավարման համակարգ փոխել:

Որքան ուժեղ լինի Դաշնակցութիւնը, այնքան մեր երկիրը կայուն, արդար, խաղաղ կը լինի: Այնքան բարեփոխումներն արագ, արդիւնաւէտ ու անշրջելի կը դառնան՝ հասնելով իւրաքանչիւր ընտանիքի ու քաղաքացու: Այնքան մեր ազգային-պետական հիմնահարցերի դրական լուծումը երաշխաւորուած կը լինի: Այնքան Հայաստանի ինքնիշխանութիւնն ամուր կը լինի:

Վստահէ՛ք Դաշնակցութեանը, դեկտեմբերի 9-ին քուէարկէ՛ք Դաշնակցութեան օգտին, եւ մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կ՚ունենանք:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը

հաւատացած է, որ ազատ մարդ, անկախ եւ միասնական պետութիւն եւ համերաշխ հասարակութիւն ունենալու մեր բոլորի ցանկութիւնը միանգամայն իրագործելի է:

Մեր անկախ պետականութիւնը, ազատագրուած Արցախը մեր արժանապատուութիւնն ու մեր հպարտութիւնն են:

Մենք կարող ենք եւ պէտք է զարգանանք առանց զիջելու:

Սա պէտք է դառնայ համազգային պահանջ, գործողութիւնների յստակ ու վստահութիւն ներշնչող ծրագիր եւ նուիրուած աշխատանք:

Սիրելի՛ հայրենակից,

վստահելով ՀՅ Դաշնակցութեանը՝ դու քուէարկում ես պատասխանատու պետութեան եւ համերաշխ հասարակութեան օգտին:

ԱԶԱՏ ՄԱՐԴ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մարդը կարող է լինել իրապէս ազատ միայն եթէ ապահովուած է նրա տնտեսական բարեկեցութիւնը, գործում են ընկերային երաշխիքներ, որոնք ապահովում են նրա ազատ կամարտայայտութիւնը եւ ազատօրէն որոշումներ կայացնելու հնարաւորութիւնը: Մինչդեռ, Հայաստանի տնտեսական քաղաքականութիւնը, անկախութեան վերականգնումից ի վեր, հիմնուած է եղել ինքնակարգաւորուող շուկայի **նէոլիպերալ** գաղափարախօսութեան եւ «անցումային տնտեսութեան» մօտեցման վրայ: Պետութիւնն ուսերից թօթափել է պատասխանատուութիւնն իր քաղաքացիների նկատմամբ, թողնելով, որ վայրի մրցակցութեան մէջ յաղթի «ուժեղը»՝ առանց հոգալու «պարտուածների» ճակատագրի մասին: Ցաւօք, այս մօտեցումը դեռեւս գերիշխում է Հայաստանի քաղաքական էլիտայի գործիքակազմում:

Զարմանալի չէ, որ մեր հայրենակիցները բողոքում են, որ յայտարարուող տնտեսական աճի պայմաններում իրենց կեանքի մակարդակը գնալով անկում է ապրում, քանի որ տնտեսական աճի բարիքներից օգտւում է «յաղթողների» մի փոքրիկ խումբ: Այսպիսով, պետութիւնն իրեն օտարեց քաղաքացուց, իսկ քաղաքացին օտարուեց պետութիւնից:

Չզգալով պետութեան պատասխանատուութիւնը քաղաքացու հանդէպ, քաղաքացին դադարում է պատասխանատուութիւն զգալ պետութեան ու երկրի հանդէպ: Արդիւնքը վիթխարի ծաւալների հասնող արտագաղթն է, երբ հայ մարդը, չզգալով սեփական հայրենիքի հոգածութիւնը, իր ապագան փորձում է կապել այլ երկրների հետ: Անհրաժեշտ է արմատապէս փոխել երկրի ընկերային-տնտեսական զարգացման տրամաբանութիւնը, վերականգնել պետութեան եւ քաղաքացու պատասխանատուութիւնը միմեանց հանդէպ՝ Սահմանադրութեամբ ամրագրուած ընկերային շուկայական տնտեսակարգին համարժէք:

Մենք առաջարկում ենք.

■ Ապահովել տնտեսական աճի եւ ստեղծուած տնտեսական արդիւնքի արդար բաշխումը հասարակութեան բոլոր անդամների միջեւ:

■ Հնարաւորութիւններ ստեղծել, որ մարդիկ կարողանան իրացնել արժանապատիւ աշխատանք ունենալու իրենց իրաւունքը:

■ Բացառել, որ օրնիբուն աշխատող մարդը չկարողանայ իր ստացած աշխատավարձով հոգալ ընտանիքի նոյնիսկ տարրական կարիքները: Երբեմն առաջարկուող վարձատրութիւնն այնքան ցածր է, որ աշխատունակ եւ ինքնասիրութիւն ունեցող մարդը գերադասում է նպաստը, այլ ոչ թէ ազնիւ աշխատանքը: Աշխատանքը պէտք է ապահովի մարդու արժանապատիւ կեանքը, ոչ թէ գոյութիւնը: Աշխատանքի նուազագոյն վարձատրութիւնը չի կարող ցածր լինել կենսապահովման զամբիւղից: Աշխատող մարդը պէտք է կարողանայ իրացնել իր հանգստի իրաւունքը, կրթութեան իրաւունքը, առողջապահական ծառայութիւններից օգտուելու իրաւունքը, մշակութային եւ հոգեւոր արժէքների հետ հաղորդակցման իրաւունքը:

■ Ներդնել յառաջդիմական հարկային քաղաքականութիւն, որի հիմքում պէտք է դրուի «շատից շատ, քչից քիչ» սկզբունքը: Շատ վաստակողը պէտք է աւելի շատ հարկ վճարի, քանի որ դրա միջոցով է հնարաւոր վերացնել եկամուտների բեւեռացուածութիւնը եւ ընկերային անարդարութիւնը: Եկամտահարկի դրոյքաչափի առաջարկուող համահարթեցումը՝ անկախ եկամուտի չափից միասնական մէկ դրոյքաչափի կիրառումը չի կարող մեղմել ընկերային անհաւասարութիւնը:

■ Յառաջդիմական հարկման տրամաբանութիւնը պէտք է գործի նաեւ գոյքահարկի եւ հողի հարկի պարագայում: Ունեւոր մարդը պատրաստ է աւելի շատ հարկ վճարել, եթէ դրան համապատասխան պետութիւնից ստանայ իր սեփականութեան լիարժէք պաշտպանուածութիւն, մաքուր շրջակայ միջավայր, իր երեխաների համար անվճար եւ որակեալ կրթութիւն, առողջապահութիւն եւ այլն:

■ Գիւղատնտեսութեան զարգացումը չառանձնացնել գիւղի զարգացումից: Գիւղատնտեսական աջակցութեան թիրախը պէտք է լինի այն գիւղացին, ով օրնիբուն աշխատում է իր հողի վրայ: Աջակցութիւնը պէտք է տրուի ուղղակի գիւղատնտեսութեամբ զբաղուողներին այլ ոչ թէ զանազան միջնորդ եւ մատակարար կառոյցներին: Աջակցութիւնը պէտք է լինի թիրախային՝ խրախուսելու առաւել բարձրարժէք գիւղատնտեսութիւնը եւ նպաստի, որ գիւղացիները դուրս ելնեն աղքատութեան ճիրաններից: Գործուն քայլեր պէտք է ձեռնարկուեն համագործակցականների ստեղծման, հողերի կամաւոր խոշորացման եւ անմշակ հողերի կրճատման ուղղութեամբ: Միաժամանակ, պետական ինչպէս նաեւ պետութիւն-համայնք-մասնաւոր հատուած ֆորմաթով պէտք է ներդրումներ կատարուեն գիւղատնտեսական ենթակառուցուածքների զարգացման համար:

■ Կանխել կեանքի դժուար պայմաններում յայտնուած մեր հայրենակիցների, որոնք աշխատաշուկայում մրցունակ չեն կամ ինչ-ինչ պատճառներով աշխատանք չունեն, լուսանցք մղուելը: Պետութիւնն աշխուժ քաղաքականութիւն պէտք է իրականացնի աշխատաշուկայ նրանց մուտքն ապահովելու համար եւ պաշտպանի աշխատողների իրաւունքները:

■ Երաշխաւորել տարեցների բարեկեցիկ ծերութիւնը: Անթոյլատրելի է, որ ողջ կեանքն արդար քրտինքով իր հացը վաստակած տարեց քաղաքացին յայտնուի աղքատութեան մէջ:

■ Ստեղծել առողջապահական ապահովագրութեան այնպիսի համակարգ, որ մեր որեւէ հայրենակից զուրկ չլինի բուժում ստանալու հնարաւորութիւնից: Որեւէ մէկը չպէտք է տառապի կամ մահանայ, քանի որ դեղի կամ բժշկի փող չունի:

■ Արտագաղթը կանխելու նպատակով՝ ստեղծել հնարաւորութիւններ, որ հայոց բանակում ծառայած, իր կեանքը յանուն անկախութեան ու ժողովրդի բարօրութեանը վտանգած իւրաքանչիւր երիտասարդ կարողանայ հոգալ իր բնակարանային ապահովուածութեան ու աշխատանքի կարիքները:

■ Օգնել յատուկ կարիքներ ունեցող անձանց դառնալու հասարակութեան լիարժէք անդամներ, ապահովել նրանց կրթութիւն ստանալու, աշխատելու, տեղաշարժի իրաւունքի լիարժէք իրականացումը:

■ Նպաստել երիտասարդ ընտանիքների կայացմանը: Ընկերային-տնտեսական, բնակարանային, ցածր զբաղուածութեան եւ այլ պատճառներով ուշ ամուսնութիւններն ու ցածր ծնելիութիւնը երկիրը կանգնեցրել են ժողովրդագրական աղէտի եզրին:

■ Վարել աշխուժ հայրենադարձման քաղաքականութիւն, նպաստել, որ հայրենիքից հեռացած մեր համաքաղաքացիները եւ սփիւռքահայերը վերադառնան իրենց երկիր՝ քանի դեռ նրանց սերունդները չեն ուծացուել ու չեն դադարել հայ լինելուց: Հայրենիքից հեռացածները եւ տարիներ ի վեր հայկական Սփիւռքում հանգրուանածները այլ երկրների տնտեսական, գիտական, մշակութային, մարզական էլիտայի մաս են: Հայրենադարձութեան բարենպաստ պայմաններ ստեղծելով՝ այդ ներուժն ու կարողութիւնը կը ծառայեն մեր բոլորի հայրենիքին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽՈՒԺ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պետութիւնը պէտք է կանգնի գործարարի կողքին, աջակցի նրան, ապահովի մրցակցութեան արդար պայմաններ եւ գործարարութեամբ զբաղուելու յստակ կանոններ: Պետութիւնը պէտք է պատրաստ լինի մասնաւորի հետ համագործակցաբար կիսել գործառնութեան ռիսքը, առաջնորդել այն բնագաւառներում, որտեղ այդ ռիսքն աւելի մեծ է կամ որտեղ շահութաբերութիւնը աւելի ցածր է, կամ մասնաւոր ֆինանսաւորումը բացակայում է: Նոյնիսկ ամենալիբերալ ու պահպանողական քաղաքական ուժերն ամբողջ աշխարհում աջակցում են իրենց երկրների ձեռնարկութիւններին: Մինչդեռ մենք մեր ձեռնարկութիւններին թողել ենք միայնակ համաշխարհային մրցակցութեան մէջ:

Որպէսզի պետութիւնը կարողանայ օգնել իր քաղաքացիներին ու գործարարներին, պետական կառավարման համակարգն էական բարեփոխումների կարիք ունի: Հանրային ծառայութիւնը (ներառեալ քաղաքացիական ու համայնքային ծառայութիւնը) պատիւ է, որին պէտք է արժանանան միայն բարձր մասնագիտական ու մարդկային որակների տէր անձիք: Պետական չինովնիկը, ով կոչուած է ծառայելու քաղաքացուն, երբեք չպէտք է իրաւունք ունենայ քաղաքացու յետոյ խօսել վերեւից: Իւրաքանչիւր պաշտօնեայ պէտք է անձնական պատասխանատուութիւն կրի իր արածի ու չարածի համար եւ երբեք փորձ չանի իր պաշտօնական դիրքն օգտագործել անձնական շահի նպատակով: Որեւէ պարագայում պէտք է բացառուի շահերի բախումը: Միայն այս դէպքում հանրային ծառայութիւնը, որը պէտք է արժանապատիւ վարձատրուի, հրապուրիչ կը լինի նուիրուած ու բանիմաց քաղաքացիների համար: Պետական մեքենային գործառոյթները պէտք է յստակեցուեն: Նոյնիսկ եթէ անհրաժեշտ լինի սահմանափակել այդ գործառոյթները, կրճատուող հանրային ծառայողները չպէտք է փողոցում յայտնուեն:

Մենք առաջարկում ենք.

■ Ստեղծել արդար պայմաններ ձեռնարկատիրութեամբ զբաղուելու համար: Հայաստանը որքան էլ բարձր տեղեր գրաւի միջազգային վարկանիշային ցուցակներում, միեւնոյն է, դա չի նուազեցնում մեր ձեռնարկատէրերի դժգոհութիւնները տնտեսվարման միջավայրից: Փոքր եւ միջին ձեռնարկութիւնները, որոնք ո՛չ միայն եկամուտ եւ աշխատանք են ապահովում, այլեւ հնարաւորութիւն են ստեղծում ինքնադրսեւորուելու ու արարելու, յաճախ խոշոր ընկերութիւնների զոհ են դառնում: Դրամատուները, վարկային կազմակերպութիւնները, տնտեսական առաջընթացն ապահովելու փոխարէն, յաճախ նմանւում են վաշխառուների՝ անհրատեսական եւ ստրկացնող վարկաւորման պայմաններով:

■ Առաջնային համարուող, ռազմավարական եւ սոցիալական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնների հետ, պետութիւն-մասնաւոր հատուած գործընկերութեան շրջանակներում, կիսել գործառնութեան ռիսքը եւ ապահովել մատչելի ֆինանսաւորում: Պետութիւնը պէտք է վերանայի տնտեսական հարցերում կրաւորական դիտորդի իր կարգավիճակը: Անհրաժեշտ է առաւել աշխուժ կերպով աջակցել այդ ձեռնարկութիւններին, նրանց հետ ստեղծել համատեղ ընկերութիւններ, տրամադրել վենչուրային ֆինանսաւորում, փոխառութիւններ եւ այլ արտօնութիւններ:

■ Աջակցել հայրենական արտադրողին: Մեր շատ ձեռնարկութիւններ չեն դիմանում արտասահմանեան արտադրողների ու ներմուծողների հետ մրցակցութեանը՝ վերջիններիս կողմից իրականացուող գնագցման ոչ ազնիւ քաղաքականութեան պատճառով: Հայ գիւղացին չի կարողանում վաճառել իր արդար քրտինքով աճեցրած բերքը, քանի որ ներմուծուած ապրանքով ողողուած է մեր երկիրը: Պետութիւնը պէտք է մտածի իր արտադրողի մասին: Արտահանման խթանմանը զուգահեռ պէտք է ներկրման փոխարինման քաղաքականութիւն իրականացուի՝ մասնաւորապէս ագրոպարէնային ոլորտում:

■ Ուժեղացնել մենաշնորհների եւ անբարեխիղճ մրցակութեան դէմ պայքարը՝ խստացնելով մրցակցութեան համար պատիժների համակարգը եւ երաշխաւորելով ազատ մուտքը շուկայ: Մենաշնորհներն ու գերիշխող դիրք ունեցող ընկերութիւնները պէտք է լրացուցիչ հարկուեն: Բնական մենաշնորհ հանդիսացող ընկերութիւնները ցուցակուեն սակարանում եւ վերածուեն բաց բաժնետիրական ընկերութիւնների:

■ Թեթեւացնել տեսչական բեռը, գիտակցել, որ տեսչական ստուգումները պէտք է ուղղուած լինեն միայն անբարեխիղճ տնտեսվարողների դէմ եւ չպէտք է մահակ դառնան բարեխիղճ ձեռնարկութիւնների գլխին:

■ Կրթական պետական պատուէր ձեւաւորելիս առաջնորդուել տնտեսութեան արդի եւ հեռանկարային կարիքներով: Գործառնութիւնը, գիտական ու կրթական համակարգերը պէտք է սերտօրէն համագործակցեն:

■ Վերանայել բնական մենաշնորհների կողմից տրամադրուող ծառայութիւնների գները: Այժմ կիրառուող գներն իրատեսական ու մատչելի չեն շատ ձեռնարկատէրերի համար, փոխարէնը՝ բնական մոնոփոլիաներին գերշահոյթ են ապահովում:

Մենք առաջարկում ենք.

■ Ապահովել պետական մարմինների գործունէութեան հրապարակայնութիւնն ու թափանցիկութիւնը: Պատասխանատուութիւնը պէտք է լինի հասցէական ու անձնաւորուած: Պետական կառավարման իւրաքանչիւր մարմնի համար պէտք է սահմանուեն արդիւնաւէտութեան գնահատման առանցքային ցուցանիշներ: Իւրաքանչիւր պաշտօնեայ պէտք է իմանայ, թէ որոնք են իր իրաւունքներն ու պարտականութիւնները եւ ինչի համար է պատասխանատուութիւն կրելու:

■ Ներդնել հանրային ծառայողների ու նրանց ընտանիքների արժանավայել կենսամակարդակ երաշխաւորող վարձատրութեան համակարգ: Վարձատրութիւնը պէտք է բաւարար լինի, որպէսզի հանրային ծառայողը չփորձի եկամտի այլ աղբիւրներ փնտռել՝ յաճախ չարաշահելով իր պաշտօնական դիրքը: Ընդլայնել հանրային ծառայութեան ընկերային փաթեթից օգտուողների շրջանակը՝ ներառելով առողջապահութեան, մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան ոլորտի բոլոր աշխատակիցներին:

■ Վարել արհեստավարժութեան եւ հանրային վստահութեան չափանիշներին համապատասխանող կատրային քաղաքականութիւն՝ շարունակաբար ներգրաւելով երիտասարդներին պետութեան կառավարման գործում:

■ Գործադրել շահերի բախման հնարաւոր դէպքերը բացայայտելու ու կանխելու, անօրինական գործունէութեան համար անխուսափելիօրէն պատասխանատուութեան ենթարկելու, գործառնութիւնն ու քաղաքական, վարչական իշխանութիւնը տարանջատելու ամբողջական համակարգ:

■ Ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան աշխուժ մասնակցութեամբ ստեղծել փտածութեան դէմ պայքարի անկախ մարմին: Այն պէտք է զբաղուի կոռուպցիայի աղաղակող եւ հանրութեան ուշադրութեան կենտրոնում գտնուող դէպքերով, այլ ոչ թէ աշխատանքի պատրանք ստեղծի:

ԱՆԿԱԽ ԵՒ ՀԶՕՐ ՊԵՏՈՒԹԻՒՆ. ԱՐՑԱԽ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մենք ձգտում ենք կերտել ազատ, անկախ ու միացեալ Հայաստան: Մեր անկախ պետականութեան վերակերտումը սկսուեց արցախեան գոյամարտով, նրա գոյութիւնը պայմանաւորուած է արցախեան ճակատում մեր յաղթանակով: Յստակ պէտք է գիտակցել, որ չկայ առանձին Արցախի հարց: Արցախը հայկական հարցի, Հայ դատի անբաժան մաս է: Այս հարցում մեր դիրքորոշումն անփոփոխ է՝ Արցախը պէտք է վերամիաւորուի Մայր Հայաստանի հետ: Արցախի անկախութիւնը մեզ համար մարտավարական նշանակութիւն ունեցող ժամանակաւոր լուծում է:

Մենք ինքներս պէտք է ապահովենք մեր երկրի անվտանգութիւնը՝ քաջ գիտակցելով, որ միայն պատերազմին պատրաստ լինելն է կանխում պատերազմի վտանգը: Այս հարցում միակողմանի զիջումների մասին յայտարարութիւնները միայն մօտեցնում եւ աւելի իրական են դարձնում պատերազմի սպառնալիքը:

Հայրենիքի պաշտպանութիւնը մեր բոլորիս սրբազան պարտականութիւնն է՝ անկախ մեր քաղաքական հայեացքներից, ընկերային կարգավիճակից, եկամտի մեծութիւնից: Բանակը պէտք է գտնուի բոլորիս հոգածութեան կենտրոնում:

Հայաստանը պէտք է վարի անկախ արտաքին քաղաքականութիւն՝ հիմնուած բացառապէս ազգային շահի եւ պետութեան հեռանկարային ռազմավարական զարգացման տեսլականի վրայ: Մենք հայամէտ եւ հայաստանակենտրոն ենք: Արտաքին քաղաքականութեան վեկտորն ընտրելիս պէտք է առաջնորդուենք բացառապէս մեր ազգային շահով: Մեր կազմած դաշինքները պէտք է լինեն ոչ թէ ընդդէմ որեւէ կողմի, այլ բացառապէս յանուն մեր նպատակների իրականացման:

Մենք առաջարկում ենք.

■ Ամրապնդել Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան ռազմաքաղաքական համագործակցութիւնը, տնտեսական, ֆինանսական, սոցիալական, մշակութային, կրթական համարկումը: Հայաստանն Արցախի անվտանգութեան, ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան երաշխաւորն է: Անհրաժեշտ է Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների միջեւ կնքել ռազմաքաղաքական համագործակցութեան պայմանագիր:

■ Շարունակել աշխատանքները Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ:

■ Ջանքեր գործադրել Արցախն իր ապագային վերաբերուող բանակցութիւններում որպէս լիիրաւ կողմ ներգրաւելու համար:

■ Ազգ-բանակ հայեցակարգի տրամաբանութեամբ զարկ տալ հայրենական գիտական եւ արհեստագիտական մտքի վրայ հիմնուած ռազմաարդիւնաբերական համալիրի ստեղծմանը: Հակառակորդն ունի նաւթային տոլարներ, մենք ունենք տաղանդաւոր գիտնականներ, գիւտարարներ, ճարտարագէտներ:

■ Խրախուսել արհեստավարժ-կամաւոր զինուորական ծառայութեան շրջանակի ընդլայնումը: Պարտադիր զինուորական ծառայութեան զօրակոչուած երիտասարդ զինուորի կողքին միշտ պէտք է կանգնած լինի մասնագիտական զինուորականը:

■ Սպաների ու պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը համապատասխանեցնել արժանավայել ապրուստի պահանջներին: Սպան ու զինուորը, ովքեր ամէն օր իրենց կեանքը վտանգի են ենթարկում, չպէտք է նիւթական նեղութիւն զգան:

■ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգի անքակտելի մաս դարձնել Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ փոխհատուցման հարցերը, բացառել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը թուլացնող որեւէ գործողութիւն: Ձեւաւորել անհրաժեշտ դիմակայութիւն ընդդէմ թուրք-ազրպէյճանական տանդեմի հակահայկական ծրագրերի:

■ Վրաստանի հետ յարաբերութիւնները կառուցել բարեկամութեան ու ազգային շահերի փոխադարձ յարգանքի սկզբունքների վրայ: Բարիդրացիական յարաբերութիւններն իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան ջաւախքահայութեան եւ ընդհանրապէս վիրահայութեան իրաւունքների լիարժէք իրականացման վրայ:

■ Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ առաջնորդող սկզբունք համարել այն, որ Հայոց պետականութիւնը ո՛չ միայն Հայաստանի քաղաքացիների, այլեւ համայն հայութեան ազգային նպատակների իրականացման երաշխաւորն է: Ըստ այդմ՝ ամէն ինչ անել սփիւռքահայութեանը հայոց պետականութեան գործընթացում լիարժէք ներգրաւելու համար: Գործադրել Հանրապետութեան եւ հայութեան տարբեր հատուածների առջեւ ծառացած մարտահրաւէրների յաղթահարման, համազգային ներուժի բացայայտման եւ օգտագործման ամբողջական ռազմավարութիւն:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Մենք կանգնած ենք մեր պետականութեան համար վճռորոշ ճամբաբաժանին: Մենք լաւատես ենք:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կազմակերպուած է, ունի կամք, միտք եւ վճռականութիւն՝ առաջնորդելու մեր ժողովրդի երթը դէպի ազատ, արդար եւ բարեկեցիկ հասարակութիւն: Մենք հաւատում ենք արդար երկրի եւ ազատ քաղաքացու ստեղծագործ ներուժին: Սա է Հզօր Հայաստան կերտելու, հպարտ քաղաքացի ունենալու գրաւականը: Մենք վճռական ենք: Մեզ անհրաժեշտ է Ձեր քուէն ու վստահութիւնը:

Վստահէ՛ք Դաշնակցութեանը, դեկտեմբերի 9-ին քուէարկէ՛ք Դաշնակցութեան օգտին, եւ մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կ'ունենանք: